ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

ՀՀՏԿԵՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱԾՁԲ-19/14 ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգով Թալինի ոռոգման համակարգի մաքրման և ընթացիկ նորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան

13 դեկտեմբերի 2019թ.
ժամը. 12:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Մ. Առաքելյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Գ. Խոսրովյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)
	Ա. Գևորգյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)
	Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ Ռ. Անդրեասյանը

1. Հայտերի բացման մասին

(Մ. Առաքելյան)

ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱԾՁԲ-19/14 ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգով Թալինի ոռոգման մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ ք. Երևան Վարդանանց փակուղի 8ա, 6-րդ հարկ հասցեում, 2019 թվականի դեկտեմբերի 13-ին, ժամը 12:00-ին:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց գնման հայտով ներկայացված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված՝

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գինը (ՀՀ դրամ)
1	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար)

Հայտերի բացումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված կարգով:

1.1.Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը

«ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱԾՁԲ-19/14» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	**Մասնակիցների անվանումը**
1	«ՋԻՆՋ» ՍՊԸ

1.2 Տվյալներ բացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

Մասնակիցը www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացրել է հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0

1.3 Տվյալներ մասնակիցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

«ՋԻՆՋ» ՍՊ ընկերության ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0

1.4 Մասնակցի առաջարկած գինը

(ՀՀ դրամ)

Չ/Հ	Գնման առարկայի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	Ընդհանուր գին, ներառյալ ԱԱՀ
1	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	23 100 000 (քսաներեք միլիոն հարյուր հազար)	27 720 000 (քսանյոթ միլիոն յոթ հարյուր քսան հազար)

1.5 Հայտերի գնահատման մասին:

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց մասնակցի փաստաթղթերը: Ուսումնասիրության արդյունքում «ՋԻՆՋ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

Գնահատող հանձնաժողով որոշեց՝

- «ՋԻՆՋ» ՍՊ ընկերության հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0

1.6 Բանակցությունների վարման մասին:

Քանի որ «ՋԻՆՋ» ՍՊ ընկերության առաջարկած գինը գերազանցում են գնման հայտով նախատեսված նախահաշվային գինը, գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և մասնակցին հրավիրել բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4դեմ-0

1.7 «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱԾՁԲ-19/14» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

Գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Մ Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել «ՋԻՆՋ» ՍՊ ընկերությանը բանակցությունների վարման մասին ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրվա ժամը 11:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Առաքելյան

Անդամներ՝ _____ Գ. Խոսրովյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ն. Նիկոլայան